

յախանի իշխան Քուրդը Վաչուտեանի¹⁶²):

162 Աղբիւրների առատ տուեալները տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 234-243 (մասամբ լրացնելի է՝ *Դիւան հայ վիմագրութեան*, պր. IV, *Գեղարքունիք*, էջ 315, N 1294, էջ 317, N 1299, 1300, էջ 328, N 1334, էջ 355, N 1427): Նշենք, որ Համլետ Պետրոսեանը եւ համահեղինակները (*Հանդարերդի վանքը*, էջ 15, ծմթ. 23) իրաւացիօրէն ուղղում են Դադիվանքի կաթողիկէի բեմի գոգաւորութեան սուադի վրայ կարմիր գերկով գրուած 9 տողով արձանագրութեան սկզբում («Աւգնութեամբ Աստուծոյ, ես՝ Մամբան, ամուսին Արիականին Հասանա եւ որդի մեր Գրիգոր, տերք գոլով տեղոյս հայրեանաք եւ մեր պարոնեքն հաստատեցին, ի :2ԺԶ: թվին [=1267 թ., ոչ թէ՛ 1307] տվաք ի սմբ ուխտիս գՄովատեղ, գՋաջուտանց, գՋողբէկանց») ասկալ տասնաւորը, որը Ս. Բարխուդարեանը շտապողաբար վերծանել էր «Ծ» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 206-207, N 724): Իրօք, այդ տառը տարբերում է գրութեան սկզբում եւ վերջում ասկալ Ծ-երից ու անունում է «գժամն» բառի Ժ-ին: Ըիշտ է, պէտք է անատի ունենալ, որ գրուածքի երկրորդ մասն աւելի ուշ շրջանում է լսելուել («Ես՝ Գրիգոր, տվի գՋագունանց հողերն գմեր բաժին իւր չորեցովն: Որդի իմ տեր Սմբգ^{իւ} եւ միաբանք սահմանեցին... որ լինի իմ մարն եւ ամուսն իմ *Ասփիհ*...»), իսկ վերջին տողը («Մոխրաբաքս մեր բաժին տվաք. թե՛^ա :2ԿԱ: [=1312 թ.]») էլ աւելի ուշ: Հրատարակչի վրիպումը կրկնել է անաւ Գ. Ե. Կիրակոսեանը (*Հայաստանը Հանկ-Քամորի եւ թորքմէն ցեղերի արշաւանքների շրջանում*, էջ 187-188)՝ պնդելով, թէ Հասանի կին Մամբանը կենդանի է եղել դեռեւս 1307-ին: Իրականում իշխանուհու՝ Դադիվանքի «ժամատան» մէջ պահպանուած ուղղանկիւնաձեւ, մէջտեղից անքաձ տասպանաբարի վրայ 9 տողով յստակ ընթերցում է. «Այս է հանգի/ստ Մամբանի/ն, ամուսնո Հա/սանա, դստե/ր Գրիգին եւ Խոր/իշաֆի, մարն / Գրիգոր: Աղա/չեն յիշեց/ք / առ [Գրիգոր] / ոչ թէ՛՝ զիշել ի բարի»]. թվ^ա :2ԾԵ: [=1306 թ.]» (Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 117, N 64): Ի դէպ, Ս. Բարխուդարեանը չի տեսել վիմագիրը եւ օգտուել է Մ. Բարխուդարեանցից (*Արցախ*, էջ 206) եւ Մ. Տէր-Մովսիսեանցից՝ ընդ որում կատարելով անյաջող վերականգնումներ (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 214-215, N 758. «Բարխուդարեանը թուականը նշանակել է :2ԽԷ:», որը եւ ընդհանրացել է գրականութեան մէջ: Տէր-Մովսիսեանը՝ միայն :2: Մեզ թուում է, որ սխալում են, որովհետեւ հէնց Դադի վանքում :2ԿԱ: (1312 թ.) ունի նուի-

Օրինակ՝ *Խաչատուր Կեչառեցին 1295 թ. երկասիրած իր «Ողբ»-ում գրում է. «ՋՀասանն յիշեմ զԽաչէնեցի, Որ մականուամբ էր որդի Դօսիի...»*¹⁶³: Ծարի Ս. Սարգիս եկեղեցու՝ 6 տողերով պահպանուած շինարարական արձանագրութեան սկզբում ունենք. «Թ^ս :ՋԻԸ: [=1279 թ.]: / Ի Հայրապետութի^{ւն} տէր Աթանասի, ի պարոնութի^{ւն} Դուսիին որդ/ոյն, Ոհան երէց ու Ոհանէս շինե/ցաք զՄ^ս Սարգիսս...»¹⁶⁴: Ծարից ոչ հեռու Գետամիջոյ վանքի Հարաւային ճակատին եղած 5 ծաւալուն տողերով շինարարական վիմագրում 1301 թ. մասնաւորապէս գրուել է. «...մեք՝ տէր Յովհաննէս Դոսիեան [իմա՛ Դոսիի զաւակ]..., Հասաւ մեզ Հրաման ի նախահարցն մերոց՝ գնալ ի մեր Հայրապետացն յառաջնոց յաթոռն հոչակելին Հաղբատ, այլ դարձ արարեալ ի մեր Հայրենական եւ բնիկ տունս Հարազատ աւազ եղբաւր Հասանա[յ] քաջ զաւրականին եւ հոչակաւոր արիացելոյն, որ եւ որդի իւր Գրիգոր՝ սիրող եկեղեցոյ[յ] եւ քահանայից, եւ ամուսինն իւր բարեհամբաւ Ասփա[յ], դուստր մեծի կոմսի Տարսայիճին...»¹⁶⁵: Իսկ Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու պատին Գրիգոր Գ-ի թողած նուիրատուական արձանագրութեան մէջ կարդում ենք. «Ի :ՋԾԲ: [=1303 թ.]. կամաւ ամենակալին Աստուծոյ, ես՝ Գրիգոր իշխան, որդի Հասանա իշխանի, թոռն Դաւիթին, միաբանեցա Մ^ս Նշանիս եւ ետու արդիւնս ի Մ^ս Աստուածածնիս, եւ սպասաւորք սրբոցս Հաստատեցին ի տարին :Բ: աւր պատա-

րատուական մեծ եւ կարեւոր արձանագրութիւն, հետեւաբար տասպանագրի վրայ տասնաւորը սխալ է վերծանուել, այն պէտք է լինի :Կ:» [!]):

163 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Հայասպատում*, մասն Բ, վեհաժողով-Ս.Ղազար, 1901, էջ 527:

164 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 218 (N 766). Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 65:

165 Մ. եպս. Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 407-408. *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 223-224 (N 798). Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 67-68: